



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 25 ՅՈՒՆԻՍ 1887

ԹԻԻ 3882

ՄԱՐԿԱՆԻՆԻՍ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրները դրկելու է առ մատակարարութիւն Արեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատուրքիան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային տեսութիւն (Պարթե-բաշխութեան հանդէս)
Պ. ԵՄԻՐՁԷ Կենդանական մագնիսականութիւն
ՄԱՐԿԱՆԻՆԻՍ ՄԱՐԿԱՆԻՆԻՍ ԻՍՏԱՆԻՍ ԻՍՏԱՆԻՍ ԻՍՏԱՆԻՍ
Պ. Տ. ԲԻԼԵՆԻՍ ԲԻԼԵՆԻՍ ԲԻԼԵՆԻՍ
Պ. ԲԻԼԵՆԻՍ ԲԻԼԵՆԻՍ ԲԻԼԵՆԻՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 24 ՌԵՐԱԹ ՅՈՒՆԻՍ

ԱՂԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐԳԵՆԻՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԶԱՆԴԵՍԻՍ

Ամէն կողմ դպրոցական պարգեւաբախութեանց տարեկան հանգէմներ կը լինին եւ լրագիրք սխեմաներ կը նուիրեն այդ հանգէմներու նկարագրութեանց:
Ձեռք ուղեր քննել թէ ի՞նչ օգտակարութիւն ունին այսպիսի հանգէմներ ժողովրդի մը ներկային եւ ապագային տեսակէտով: Մեզ համար փընտռելի կէտն այս է թէ ի՞նչ եղանակապէտք է կազմակերպուած լինին այս հանգէտք, եւ թէ ի՞նչ պէտք է խօսին հոն ատենաբանք:
Երբ գիտնանք թէ ի՞նչ է այս հանգէմներու նշանակութիւնն, այն ատեն կրնանք հեշտիւ գիտնալ թէ ի՞նչ պէտք է լինին հոն խօսուածներն:
Ըստ մեզ այս հանգէտք տեսակ մը հրապարակային համարատուութիւն մ'են ի մասին վարժարանաց տարեկան ընթացքին: Շատ բնական է որ պատասխանատու մարմինք գան հոն տեղեկացնել ժողովրդեան թէ ի՞նչ դործեցին մէկ տարուան մէջ, թէ ո՞րչափ աշակերտ կը պարունակէ վարժարանը,

քանի՞ն վճարողք եւ քանի՞ն ձրի են, թէ ի՞նչ ուսան աշակերտք այն մէկ տարուան մէջ, ո՞րք են դասատուք, թէ ի՞նչ գումար ծախսուած է վարժարանին, ո՞րք են հասոյթք, ի՞նչ քաջաբութիւն գտած են ժողովուրդէն, քանի՞ն են այն ծնողք որք մեքած են վրձարել իրենց տղոց թոշակն: Ի հարկէ պատասխանատու մարմինք մատնացոյց պիտի ընեն այս առթիւ այն թերութիւններն եւ պակասութիւններն որք տակաւին կան վարժարանին մէջ եւ որոց բարձունք կախեալ է ժողովրդեան տալիք դրամական եւ բարոյական քաջաբութեանէն: Ահա ատենք են եւ այսպէս պէտք է լինին այն տեղեկութիւններ որք հարկ է տրուին այսպիսի հանդիսաւոր օրերու մէջ:
Իսկ եթէ պաշտօնական մարմիններէ դատ խօսելու փափաքողք գտնուին, այսպիսիք պէտք է որ իրենց նկատման վերոյիշեալ կէտերէն մին եւ խօսին դաստիարակութեան օգտակարութեան, ազգային լեզուի մշակման, հայ տղայոց հայ վարժարանները ղրկելու պէտքըն եւ այս կարգի նիւթերու վրայօք:
Եթէ ատենաբանն ուղղէ իւր խօսքն առ ընթացաւարտս, հարկ է որ ազգու խօսքերով բացատրէ անոնց թէ այս միջման դարուս մէջ ուր մարդիկ հացն իրարու ձեռքէ խլելու կը նկըրտին, պէտք ունին աշխատելու որպէս զի դիրք մը կարող ըլլան ստեղծել իրենց, թէ ոչ մէկ պարագայի մէջ վհատելու չեն, թէ պէտք է սիրեն այն եկեղեցին եւ ազգն որոյ մէջ սնան եւ մեծցան, թէ պէտք է յարգեն ազգային իշխանութիւնն եւ միով բանիւ պէտք է ծանօթացնեն իրենց թէ ո՞րք են իրենց պարտականութիւններն առ հայ ազգն, հայ եկեղեցին եւ առ ընդհանուր մարդկութիւն:
Ահա առատ նիւթ խօսելու այսպիսի հանգէմներու մէջ:
Ձգել այսպիսի հաճելի եւ հրահանգիչ նիւթերն եւ խօսիլ յաջեւ յաջեակ առանց քննութեան մեր ներքին դործոց վրայ, պարտաւերազային պաշտօնական մարմինները, տկարացնել նոցա բարոյական ոյժը, վատ դաղափարներն չնել թարմ եւ եռանդուն մտաց մէջ խաբել ամբոխն ուռուցիկ բառերով, ոչ ազգասիրական եւ ոչ օգտակար դործ է:
Եթէ մեր մէջ շատ անգամ ազգային հիմնարկութիւնք պէտք եղած օ-

գուման առաջ չեն բերեր եւ երբեմն ալ կը կորնչին, պատճառն այն է որ չենք գիտեր այդ դործն իրեն օրինաւոր սահմանին մէջ պարփակել: Գործ մը որ իւր նպատակէն կը շեղի, դատապարտեալ է կորսուելու:
Ի՞նչ պէտք ունինք դպրոցական հանգէմներու մէջ, ուր ժողովուրդը կուգայ ուրախացելու եւ հրահանգուելու, դպրոցական եւ դաստիարակական խնդիրներէ դատ ուրիշ խնդիրներով զբաղելու: Եթէ մէկն ուղէ քննադատել ազգային իշխանութեան արարքները, կրնայ օրագրաց միջոցաւ եւ այլ եղանակաւ ընել իւր քննադատութիւններն:
Այս ամէն նկատողութիւններն եղբակացներով կոչում կ'ընենք Թաղական խորհրդոց եւ մասնաւոր վարժարանաց որ արգիլեն դատնաբանս այսպիսի հանդիսաւոր օրերու մէջ խօսիլ այն կարգի խնդրոց վրայ որք ամենեւին վերաբերութիւն չունին դաստիարակութեան խնդրոյն հետ:
Այսպէս շարժելով, Թաղական խորհուրդք եւ տնօրէնք մեծ մեծ ծառայութիւն մատուցած կը լինին ազգային դաստիարակութեան դատին:
ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՄԱԳՆԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ա.
Քանի մը տարիներ առաջ կենդանական մագնէտիզմ (magnétisme animal) բառն եւեթ արտադրուելու մեծ յանդիմանութիւն մ'էր: արդարեւ ոմանք կուրօրէն ընդունած՝ ոգւով շափ կը պաշտէին, իսկ այլք լիովին անտարբեր աչք կը նկատէին այն երեւակոյցեալ սքանչելիքն: Ի վերջոյ ընտանեկան յաճախակի նիստերու մէջ տակաւ առ տակաւ օղաւաղած եւ խառնակած էին զայն հոգեհարցութեան հետ (spiritisme), որով կարելի չէր եղած գրգռել նմա այն կնիքն զոր փորձն եւ ուսումը սահմանեցին յետ բրանաճան խուզարկութեանց:
Անկաւ ուրեմն այն խորհրդաւոր գիմակն ի շնորհս բաղնաթիւ գրական հետազոտութեանց, եւ եղելութիւն մը որ մինչեւ այն ատեն գերմարդ կային եւ արտաքոյ կարգի կ'երեւէր, գտաւ դիւրութեամբ իւր ամեն նապայ զ բացատրութիւնը: Ռոմիկն ու ազնուականը, տղէտն ու լուսամիտը, դոգմեա իմն տնօրէնաց զբաղմանց փոխարէն նախաձեռնար կը համարէին հոգեհարցական եւ

մագնիտական ընկերակցութիւններ յօրինել եւ ձմերային գիշերներու միակերպ եւ երկարատեւ ժամերը զոհել սոյն օրինակ պատրանաց :

Իրաց այս ծայրայեղ վիճակին մէջ, կենդանական մագնիտականութիւնը, գրեթէ հանրածանոթ եղած, հասարակաց միտքն ահարկու ապաւորութեամբ վրդովել կ'ըստպառնար. եւ ահա 1843ին անգլիացի հմուտ եւ հանճարեղ Պլէշե Բոնիւս փարատեց այն կարծեցեալ գերբնական ամպը :

Ջախջախեց այն ցնորական Բեմեր-Բեման, յերեւան հանելով ճշմարտութիւնն, եւ լոկ գիտական ստառաւորանի մը հաստատուն հիմանց վրայ կառուց մի նոր շէնք, մի նոր վարդապետութիւն որ զարդիս առաջնորդեալ եւ ուղղեալ բժշկութեան մեծածախ եւ անխոնջ ներկայացուցիչներէ, հսկայաբայլ կը յառաջանայ նոր աստարիզի մը մէջ :

Մեսմերութեան (mesmérisme) եւ ծորականութեան (fluidisme) Պլէշեի կողմանէ տրուած հարուածը վճռական եղաւ, որովհետեւ այն հին գրութիւնն որ մագնիտական հոսանքիւ խոստովանէ եւ մագնիտոլէզ բոլորէ կ'ենթադրէր, փոխանակեցաւ նոր գրութեամբ, որ կ'ենթադրէ ջրային ամբողջութեան մի մասնաւոր բնութեան վիճակ որ տեղի կ'ունենայ արուեստական միջոցներով : Միով բանիւ սոյն առարկայական կարծեցեալ մագնիտականութեան տեղի տուաւ ենթակոյական Քնէութիւն (Hypnotisme) կոչուածը :

Թէպէտեւ մենք այն յաւակնութիւնը չունինք որ ազնիւ ընթերցողը մեր վրայ կատարեալ հաւատը ընծայեն, բայց եւ այնպէս ցուցնել յետոյ որ մեր ըրած փորձերն որ եւ է յարաբերութիւն չունին հմուտութեան, ըզմութեան, մտածութեանց փոխանցման, զգայարանաց չըման, եւ այլ հազարամէկ խաբէական անպարարութեանց հետ, որը շաղկիրատութեան չըմանակին կը վերաբերին, եւ հաստատել յետոյ որ ամեն ոք, որոշեալ պարագայից ներքեւ, կարող է մի եւ նոյն արդիւնքները ձեռք բերել, եթէ գտնուին զեռ այնպիսի անձինք որ թերեհաւատ մնան, յայնժամ պիտի ըստիպուինք գոչել անգլիացի Տիւկալ Սթիւարտ իմաստասիրին հետ որ կ'ըսէ. « Զատիագոյնց սկեսարականութիւն եւ բացարձակ դիւրահաւանութիւն պակասամտութեան զաւակներ են » :

Արդ այժմ սխառած կը համարիմ հարեւանցի իմն ակնարկ մը ձգել մագնիտականութեան պատմութեան վրայ, ի մէջ ամէլ նաեւ այն համոզման միջոցներն որ ի գործ դրուած են մագնիտոլի մը կողմանէ եւ բացատրել ու նկարագրել ընթացքի զանազան վիճակներն եւ փորձերն, հանդերձ բնականական պատճառք :

Մագնիտականութիւնն եւ նորա արդիւնք այնչափ հին են որչափ մարդկութեան գոյութիւնն, ուստի Մեմֆէ ոչինչ հնարած էր թէպէտեւ կենդանական մագնիտականութեան գիտն իրեն ընծայել կամեցաւ :

Յառաջ քան զնա, բազում բացատրել կամեցան սոյն տարօրինակ երեւոյթներն, եւ հնգետասաներու դարուն վերջերը Բոթեմա կ'ըսէր թէ կան մարդիկ որ տէր են զօրաւոր եւ կենսատու յատկութեանց որը անոնց շուրջը գտնուող առարկայից մէջ սպրդելով, կարող են նշանաւոր փոփոխումներ յառաջ բերել ի նոսա :

Բարաւել կ'ենթադրէր թէ կար երկնային մարմիններէ արծարծեալ ծորան (fluide)

մը, որ ձգողականութեան միջոցաւ համօրէն էականն ընդ իրեարս հաղորդակցութեան մէջ պահէ : Բարասէլի վարդապետութիւնն ունեցաւ իւր երեւելի կուսակիցներն եւ հետեւողներն, յորս յիշատակի արժանի են Հանման եւ Վան Հէմմ, որ իւր մագնիտական օծանելեօք, մորհամօք եւ սպեղանեօք ամենազգի վերջերը կը բուժէր :

Յետոյ ժամանակագրութեան կարգաւ կուգան Ռեպէ-Ֆլէշ (1638), Քլէմէր (1673) Կառնէ (1774), եւ հուսկ յետոյ Մեմֆէ կուգայ ի Բարիզ, հետը բերելով Վիէնայէն իւր գիւտն, որ է կենդանական մագնիտականութիւն :

Ահաւասիկ Վիէնայի բժշկին կողմանէ ի գործ դրուած եղանակներն ստառաւոր համար մագնիտական վիճակն (mémoire sur la découverte du magnétisme animal) : Խեղ մը հիւանդներ մի կարգի վրայ շարուած մագնիտականութիւնը կ'ընդունէին երկաթեայ ձողերէ, մարմնոյն վրայ շուրջանակի պատեալ պարանէ մը, բթամախից միութենէ, կամ զաշնակի մը քաղցրահիւն ձայներէ : Ախտաժէտները կը մագնիտականային նաեւ ուղղակի մատանց կամ երկաթեայ ձողերու միջոցաւ զոր հիւանդին զլսուէ, երեսին, կողերուն վրայ կը պտտցնէր, միշտ ի նկատ ունենալով բեւեռաց տարբերութիւնն, եւ երբեմն ալ ախտնդեաց եւ ենթափորի (bas-ventre) վրայ մատանց ճնշմամբ եւ ձեռաց վերադրութեամբ, որ մերթ ժամեր կը տնէր :

Այս բոլոր եղանակներն գրեթէ մի եւ նոյնն են ինչ որ զարդիս կը կիրարկուի գրգռելու համար ընթութիւնը :

Մեսմերութիւնը մօլորեալ աշակերտներ ունեցաւ, յորս նշանաւոր եղան, Հէրշէ Ե Տէլէշ (histoire critique du magnétisme animal) եւ գործեալ Բեմ-Բեման մարքիզ եղաւ որ մագնիտական Société de l'Harmonie կոչուած հոշակաւոր ընկերութիւնը կազմեց, եւ արդարեւ մարքիզին կը պարտիմ արուեստական ընաշրջութեան գիւտն :

Յամին 1815էն մինչեւ 1837 մագնիտականութիւնն ոչ միայն ռաւկին, այլ նաեւ պաշտօնական դասուց անդամաց միտքերն անգամ յուզեց եւ Գաղղիոյ բժշկական ակադեմիային անթիւ եւ անհամար արձանագրութիւնք կը տեղային : մինչեւ որ պաշտօնական զիր մը յայտարարեց որ մագնիտականութեան աւթիւ յղեալ հաղորդութիւնք եւ գրուածք անպատասխանի պիտի մնային :

Հուսկ յետոյ 1843ին Մանչեսթրի մեծանուն եւ խորաքննի վիրաբոյժ, քանդեց եւ հիմնայատակ ըրաւ մեսմերեան շէնքը, ցուցնելով որ ամեն լուսաւոր առարկայի անթիւ նային ընթութիւն յառաջ կը բերէր առանց ուրիշի մը ազդեցութեան ներքեւ գտնուելու :

Հաւաստարապէս ձեւերու եւ կեցութեան տեսակներն եւ յուշարարութեան եւ հրահանգման եղանակները Պլէշե ինքն ուսումնասիրելէ յետոյ ի լոյս ընծայեց (traité du somnambulisme) :

Յայնժամ քննական վիճակաց մեքենականութիւնը բացատրելու համար նորանոր վարդապետութիւններ յերեւան ելան, որպէս են Կլէմէ եւ Էլեմար-Կենսաբանութիւնն (electro-biologie) եւ Ֆլէշ-Էլեմար-ուժականութիւնն (electro-dynamisme) :

Սակայն այժմ մագնիտականութիւնն կամ լաւ եւս է ասել, ընթութիւնը ճշմարիտ եւ գրական ճամբու մը վրայ է, եւ օր ըստ օրէ մեծանուն անձոնց կողմանէ

եղած գիւտերը կը բազմանան, յորս Ժէր-Թէշ (recherches sur l'hypnotisme), Ժէշ-Սէ-Կար (les mystères du magnétisme animal), Ֆլէշ եւ Պլէշ (Incision d'un abcès à l'anus pendant l'anesthésie hypnotique), Վեմ-Էլեմ (amputation de cuisse pratiquée pendant l'anesthésie hypnotique), Լէշ-Է (étude sur le somnambulisme pratiqué), Տէմ-Էլեմ (la névrose hypnotique), Յիշեմ նաեւ Գերմանիոյ մէջ Պլէշ, Հայ-Էլեմ, Կլէմ-Էլեմ, Վեմ-Էլեմ, որք համարաւոր խուզարկութիւններով նշանաւոր եղած են :

Բայց եւ այնպէս ամենահմուտն Եւրոպայի մեջ ընթութեան զանազան վիճակներն, որք են նիրհումն կամ թմրութիւն (léthargie), բնափութիւն կամ քնամիման ձգութիւն (catalepsie), ընաշրջութիւն (somnambulisme) :

Վերջապէս Նանսիի բժշկական կաճառ ուսուցիչ Պլէշ-Էլեմ եւ ծովային զօրաց բժիշկ Պլէշ-Էլեմ ընթութեամբ զբաղեցան, եւ վերջինս յաջողեցաւ արանց վրայ մի միայն յառաջ բերել մի նոր վիճակ յաջադան (fascination) անուամբ, որու համար քանի մը տողեր զոհել սխառած կը թուի մեզ :

ՊՈՂՈՍ ԷՄԻՐՁԷ

Ի Մ Ա Պ Ա Գ Ա Յ Ն

Ա.

ՄԱՆՈՒ Կ

Այն ինչ մանուկ դեռ կամ իմանալի, Օրօրոցն էր իմ օթեւան. Մինչ իմ մօրս ոտնաձայնն էր, Միակ հրճուանքս իմ սրտակն :

Մինչ տայր բերանս մանուկ երգեր, Այտերս առնուին համարյոք միայն, Մօրքս երկու կայտառ ծիծեր, Էին միակ իմ Ապագայն :

Ապագային այդ այբուբեն, Յինքն ձգէր անթարթ աչերս. Անոնց միայն եւ ոչ առ էն, Գեռ ուղղեալ էր չըթանցս ալերս :

Բաւ էր չըթանցս զանոնք ողջոյն Գրիւն, ծծել, ահա համայն Անոնց փայլ, գեղ զնայր իսկոյն. Տխուր էր ինձ իմ Ապագայն :

Բ.

ՊԱՏԱՆԵԱԿ

Անցան օրեր, հա՛ պատանեակ, Ոստնում, երգեմ, նմանելով, Սակայն միակ հոգւոյս դղեակ, Գրաւած էր մօրքս գորով :

Բայց է՞ր ոչ ձօրս. զի ութ գարուն, Հաղիւ ունէր հասակս մատաղ, Երբ որ Պարկեայք ի վիհ մահուն Գլորեցին զիմ Հայր չքնաղ :

Ոչ, ոչ, այս մահ չաղէր ինձ ահ, Նսեմ գործել զիմ Ապագայն : Զի դեռ չէն ինձ ծանօթ կեանք, մահ, Ամեն գործէ յիւ լռելայն :

Մօրս բաղկաց մէջ առաւօտուն,
Շախ սէր, գգուանք, միրգ ապա գայ,
Յետ վայելից այս ամենուն,
Երեկոյն էր իմ Ապագայ:

Ի ծունդըս մօրս կամ ասոր շուրջ,
Երեկոյն տօնէր ներկայս:
Հոն գոբգոբանք, հոն քաղցր անուրջ,
Վաղիւն միայն էր Ապագայս:

Երբ մայրս վաղուան մի պտոյտ այլ,
Ինձ կ'աւետէր, ես ակնապիլ,
Վեր, աստղերուն եւ անոնց փայլ,
Ապագայիս էր զուարթ նիւ:

Բայց երբ, վա՛յ ինձ, մայրս գուժէր,
Թէ աղատէն վերջ միրգ չկայ,
Ինչ թաքուն լաց, ինչ բռնի սէր,
Ա՛լ անյոյս էր իմ Ապագայ:

Գ.

ԵՐԵՏԱՍԱՐԳ

Անցան, սահեցան օրեր, տարիներ.
Անցան, սահեցան այդ անմեղ կիրքեր:
Արիւնք հասակին իջաւ առ ժամայն,
Վեր ի վայր շրջեց պարզ խոհեր համայն:
Հուր աչքերուն մէջ հրդեհ ի սրտին,
Երեք վեցերու ծաղիկ հասակին:
Բոլոր մտածմունք սիրելու միայն,
Ի նէ խմբէին, եւ Ապագայն
Բոց էր կը վառէր, վարդի պէս կարմիր.
Ձերդ բոց օր կ'այրէ, կեանք, անձ, ամեն իր:
Անուշ Անոր հուպ, մօտ ըլլալ Անոր,
Թող այրի սիրտս, այս էր խոհս բոլոր:
Հոն պատգամին մէջ էր Մէրս անդարձ,
Հոն տեսայ զինքը, վեհ, չքեղ յանկարծ,
Հոն, վեր կ'ուղղէին հոգւոյս թռիչներ,
Հոն, նախ, գիտեմեք, աչքին թարթիչներ,
Գաղտ տուին բարեւ, սէր յոյս, հրաւէր,
Հոն Ապագայիս զրուեցան հիմեր:
Վեց օրեր քրտամբ, բայց դժուար գացին.
Արիւն քերեցաւ սիրակիր բարձին.
Ա՛հ, սխալի օր, Սուրբ Օր եօթնեկին,
Քու ջինջ շողիւններ պատրաստեն հիգին
Ամեն լիութիւն եւ սիրողին բաստ:
Ահա միմունջներս, որք սիրապատուաստ,
Սրտիս խանդ տուին, քայլերու շտապ,
Ո՛ր.

— Ի տես. վա՛շ ինձ,

— Վա՛յ քեզ, դո՛ւ, պարապ,

Կորուսեա, կ'ազգէ պատշգամն անձայն,
Երջանիկ, թշուառ, ահա՛. Ապագայն:

Երբ նախ սիրենք, կարծենք սիրել յաւիտեան,
Ղեն միայն, արու եւ էգ անբաժան:
Բայց երբ խաբուինք մի քանի հեղ, ալ ծի-
ծաղ,

Տամբ այնքա՛ որ խօսի զսիրոյ, բայց աւա՛ղ,
Հոգին է հուր, սէրը նիւթն է բոցատու,
Ինչ որ կ'այրի, ինչ որ կեանք է, ծիծաղ ու
Արհամարհանք բաւ չեն մարել, միշտ կայ սէր,
Մին միւսին հետք խափանէ պէս ալիքներ:
Այսպէս սիրոյ ի գլուխ տուին շրջաններ,
Յուսկ եկաւ նէ՛ մեզ քաջ ծնունդ աւակներ:
Ապագայիս ընդլայնեցաւ հորիզոն,
Նիւթոյ դէմ արդ մի այր կայ մի Ամաղոն.
Նէ լաւ անտես, ես սիրա՛լլումներանի,
Վաճառական առատածեւն անուանի,
Երեւոյթսան, Հոգաբարձու, անուրջ բիւր,
Կաճառապետ, մի ուսեալ մարդ որ հեշտ
զիւր
Պիտի գտնէ օգտաւարկին այդ մեծ ղէկ,
Մարդն կամ հայն զամիսեայ պսակ, հէ՛ տղեկ

Պիտի դնէ գլխուս վրայ եւ ես վեհ
Պիտի շրջիմ եւ պիտի գան ինձ պատեհ,
Պարծանք, ոսկի, տուն հոյակապ, պերճ
սպաս

Կառք ու նաւակ, առատ սեղան եւ մնաս
Տալ աղքատաց եւ ունենալ շողքորդ
Վսեհ, չքեղ, պերճ անուներ տոնուլ յորդ.
Կին դո՛ւ, որդիք. Օ՛ն անդր վշտաց առարկայ
Ձեր առջեւ կայ մի մեծ, վեհ մ'Ապագայ:

Օ՛ն ի բրտունս ի վաստակ,
Ունեւ զայս վերջ բովանդակ.
Բայց բաղդ, ո՛հ, զիս դատատու
Ըրաւ, ի՞նչ գործ կենսատու,
Ուսո՛ւ չորս հեղ հինգ քսան.
Ա՛ն ամսոյն վերջ ամսական:
Բայց ամսականք կը դիւլուն.
Հոգ չէ միայն չխղութիւն
Հոգաբարձուին հետ կապեր,
Ո՛չ անոր դէմ, այլ միշտ թեր
Խօսէ, թէ ոչ, ստոյգ լե՛ր,
Անոր շրթանց մի երեր
Բաւ է, զքեզ պաշտօնէդ
Ձգել, զրկել հաշիւէդ.
Հոգ չէ, կ'ըլլաս ազգասէր.
Ձքեղ ունին գեր ի վեր:
Հաշուոյդ համար, գնա՛ մերթ,
Իշխանն, ասէ, այսօր ե՛րթ.
Կօչկաց մորթեր թերթ ի թերթ.
Բայց դեռ քիչ կան բիւր եկերթ:
Իշխանն, ասէ, գիտմամբ է,
Որ ինձմէ խուս փող կորդէ:
Ալիքն ինչպէս քարն, աւաղ
Աստիս անդին հանապաղ
Ի գլուխ ի գլուխ տարբերէ,
Հրճուի յաւէտ, իւր խաղն է.
Կամ ինչպէս հողմն օդին մէջ
Խառնին տայ բիւր ելեւէջ,
Հայ դատատուին այսպէս բաղդ
Մերթ ի դժոխս մերթ ի դրախտ
Իշխանին այն հետամուտ
Շնորհիւ առնէ ելեւմուտ:
Եւ երբ ժպտէր կամ կնճէր
Հոգ բարձողին երեսներ
Ըստ այնմ էր իմ. Տէ՛ր վիայ,
Փայլուն կամ մութ Ապագայ:

Դ.

ՀԱՍՈՒՆ ՀԱՍՈՒՆ

Յաւիտենից տայ մարտ, կ'ըսեն, Կոռնոս,
Արեւմտեան պատեհէ քանդել ի քոսս.
Անհամար են իւր բանակներ եւ իւր զօր
Գուռն հրապառ յԱրեւելից ամեն օր
Արձակէ ճիւղ եւ յետ անկման ապարդիւն,
Շէկ, չէկ ու մեքեր ի սիրելու տեղայ, պար-
տութիւն

Ոչ. յաղթութիւն. ոչ. անորոշ կուռն մէջ
Եւ ակն իմ ցարդ, մի կողմ նկուն, մի կողմ
պերճ
Ձեանս թէ եւ յիստուն եւ չորս տարիներ.
Վկայ կուռն եւ սպասող անհամբեր,
Թէ ժամանակ պիտի բերէ ի կատար
Իմ երազներ, որք անդ ստին, անդադար,
Տղայ տիէս, բոլորուն յիմ ճակատ:
Ա՛հ, զոյգ ծիծեր, նախապագայս, իմ ապատ,
Ձոյգ գործեր իմ տաճարիս մանկական,
Ուսկից ի վեր իմ միմունջներ անշուն
Յունկըն իմ մօր բարձրանային ի հաճոյս,
Ի պատրաստ. խել հիւթն այն կենսարոյս,
Կոկոնք կենաց, ոյց շրթանց հոսի ի ճաշակ
Ալխարհ մ'արժէ, թէ ըլլայ որ խուս գիտակ
Ո՛հ, ինչէ՛ր թէ հոս մնայ իմ Ապագայն.
Մի քայլ յառաջ, նա չքեցաւ ամենայն,
Վաղուեան յուսամ, երեկոյն ակն ունիմ,

Մօրս գգուանք, կտոր մը միրգ, շատ ու-
նիմ,

Երանի՛ թէ, հոս եւս ապայս վերջանայր:
Մատաղ տիւցս, մատաղ շիրիմ պերճանայր:
Բայց բնութիւն հոսանք տուաւ գէտ յառաջ
Նս կեանք գոչեմ, բայց արձագանք տայ
աւաղ,

Սէ՛ր, զարմա՛նք, սէ՛ր, ի փորձ գոչեմ, սէ՛ր,
սէ՛ր, ա՛հ

Ձայն գուժաբեր, զառնայ. անդէն մա՛հ,
մա՛հ, մա՛հ

Թո՛ղ խնար հոս, երիտասարդ իմ իրան,
Դառն ալցունքներ թող թափուէին իմ
վրան,

Սէ՛ր գոչեցի, է՞ր բնութիւն պիս խաբեց,
Ոչ ի վիճակ դառն քան զմա՛հ զիս գոչեց:
ՅՈւսուցչութիւն, ոյր ի զլուս կախեալ կայ
Ժայռ Փղեղեայ յարհաւիրս մշտակայ:

Թող այս աչքերս շտեսնէին ընդ երկարս
Խրտուիլակներ, տեսքով բարի, կեղծ ի բարս
Ոյց ի ճակատ, բարիք, ուսում կայ գրուած,
Իրենք հաղիւ գիտեն այրբեն, առեղծուած:
Եւրոպա միշտ ուսման տօնէ ոսկեդար,
Հայը ուսուցչաց տօնէն անփոյթ միսրոց
դար:

Ինչ, ասկէ վերջ ինձ որպիսի ապագայ,
Հիւանդանոց կամ աղչանոց ստոյգ կայ:
Անա՛րգ վիճակ, սոսկո՛ւմ, միտ բեր նստիլ
մօտ

Ուսման զո՛ւ մը եւ ապուշներ պէս մի հօտ:
Գան այցելուք վիճտ ի բերան եւ դժգոհ
Երթան մոռնալ. ա՛լ ինչ մնայ ընել. ո՛հ,
Մտնել կանուխ ի գերեզման, ճար չկայ,
Հայ ուսուցչի մ'այս է վսեմ Ապագայ:

15 Յուլիս 1887 ՄՈՒԱՅԵԱՆ ՄԱՐԴ

ԲԻԻԶԱՆԴԻՆՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

Ներսէս Պատրիկ Հայկազն Խորհրդական կայսեր.
— Յաղթութիւն Ներսէսի Խաչիկոյ մէջ. — Դիւցադ-
նական քաղութիւն Հայկական զորագոյնի. — Ար-
տաւադ. — Երկու Հայազգի դիւցադներ. — Յաղթանակ
Ներսէսի. — Ներսէս կը տիրէ Հռոմայ. — Ներսէս թա-
գաւոր Գոթաց. — Մեծ պարտութիւն Գերմանացւոց
ի Ներսէսէ. — Ներսէս ինքնակալ Հռոմայ եւ Խաչիկոյ:

Նախորդ յօդուածը կ'աւարտէինք հե-
տեւեալ խօսքերով. . . . Եւ լոկ այսպիսի
հայազգի զորապետներով եւ նոցա սոյն օ-
րինակ քաղաքործութեամբ, խկապէս մեծ
իրաւունք չպիտի ունենայինք յայտարարե-
լու թէ յոյներէ յետոյ հայերն են որ առաջ-
նակարդ դեր խաղացած են բիւզանդական
կայսրութեան քաղաքական ասպարէզի, հա-
պա ի հաստատութիւն այս յայտնութեան
կան բաղմամբ եւ նշանաւոր փաստեր, որ
լիակատար իրաւունք պիտի տան վերոյիշ-
եալ կարծիքին. . . . Աւասիկ այս անգամ եւ
չարունակաբար առաջ պիտի բերենք այդ
փաստեր ըստ կարելոյն մանրամասնու-
թեամբ, թէ եւ վերոյիշեալ կարծիքին ճշ-
մարտութիւնն ըմբռնելու համար կը բաւէ
ըսել որ Բիւզանդիոնի գահի վրայ նստող
68 կայսրներէն 16ն եղած են հայեր: Այս
հայ կայսերաց մէջ գտնուած են այնպիսիք,
որ իրենց երեւելի քաղութեան կամ իմաս-
տուն աշխարհապարտութեան համար ստա-
ցած են Ժե՛ տիտղոսն, որպէս է Մեծն
Վասիլ: Սակայն այս կայսերաց յիշատակու-
թեամբ երբեք պէտք չէ մոռնալ հոչակա-
ւոր անուն մ'որի համբաւի սուաջ կը նսե-
մանան-նոյն իսկ կայսերաց համբաւն: Այս

անձն է՝ Ներսէս Պատրիկ Հայկազն, որի մասին շատ ընդարձակօրէն կը խօսին Յունաց եւ Լատինացւոց բազմաթիւ պատմագիրներն, որպէս են Աղաթիոս, Եւագրիոս, Պրոկոպիէս, Թէոփանէս։ Սա իւր եզակի քաջագործութեանց համար միջի դարի մեծահռչակ զօրավարաց կարգը կը դասուի։ Մեծին Հայոց նախարարութեանց որդիներէն մին էր։ Ժողով հասակին Պրոկոպիէսը, սնաւ կոյսեր պալատի մէջ, Յունաց եւ Լատինացւոց մատենագիրները մեծագոյն գովասանութեամբ կը խօսին Ներսէս Հայկազնի մարդկային առաւելութեանց վրայ, եւ կը յաւելուն թէ իւր այդպիսի գերազանցութեան պատճառաւ համարուեցաւ ակն պատուական Յունաստանի մէջ։ Կը յարգուէր մեծամեծներէն եւ հասարակութենէն, մանաւանդ Յունաստանի կայսրէն, որմէ կարգուեցաւ արքունի գանձապետ եւ հիւպատոս, ապա պատրիկ եւ խորհրդական կայսեր։ Այս միջոցին բիւզանդական կայսրութիւնն անդադար պատերազմ կը վարէր Գոթաց զէմ, երբեմն յաղթուելով եւ երբեմն յաղթելով։ Յունաց հռչակաւոր զօրավարն Բեզիսարիոս նոյն ժամանակ յունական զօրքով կը գտնուէր Իտալիա եւ կը պատերազմէր Գոթաց հետ, սակայն անկարող կը լինէր յաղթել Գոթաց։ Կայսրը տեսնելով որ ոչինչ կը յաջողի Բեզիսարիոս, օգնութեան կը զրկէ։ Վերսէս Հայկազն հինգ հազար զօրքով, որոյ հետ էր եւ մի գունդ հայկական զօրք զօրավարութեամբ Ներսէս Բասենցիի, որի նկատմամբ արդէն գրուեցաւ նախորդ յօդուածի մէջ, Ներսէս Իտալիա հասնելուն պէս խորհուրդ կազմեց Բեզիսարիոսի հետ, ապա իսկոյն պատերազմի սկսելով Յոյք յաղթեցին Գոթաց։ Բեզիսարիոս տեսնելով որ յաղթութիւնը Ներսէսի կը պատկանի ժողովին զօրքուեցաւ նորա հետ։ Այնուհետեւ Ներսէս իսկոյն վերադարձաւ Կ. Պոլիս, իսկ հայկական զօրագունքը մնաց այն տեղ։

Ներսէսի դարձէն յետոյ Բեզիսարիոս պատերազմ մղեց ընդդէմ Գոթաց, այլ Յոյները չարաչար կը յաղթուէին առաւօտէն մինչեւ իրիկուն։ Պրոկոպիոս կ'ըսէ թէ երբ Ներսէսի հրամատարութեան տակ եղող Հայոց զօրքերը տեսան Յունաց այս պարտութիւնը, նոցանէ եօթն քաջակորով մարդիկ յառաջանալով արձանացան ապառաժու եւ անմերձեանի վայր մը, ապա սկսան դէմ դնել Գոթաց։ Այս կերպիւ վանեցին Գոթացի զօրաց ահագին բազմութիւնն եւ ետ մղեցին։ Բեզիսարիոս զմայլած հայ զօրաց սոյն մեծապանծ քաջագործութեան վրայ, ոգի առաւ եւ սիրտ տալով բանակին բռնէր յարձակում գործեց եւ յաղթեց թշնամեաց։ Բեզիսարիոս մի քանի պատերազմներ եւս մղելէ յետոյ վերադարձաւ Կ. Պոլիս նմանապէս եւ Ներսէս Բասենցի, որի փոխանակ Հայոց զինքի զօրավար կարգուեցաւ Արտաւազ նորա ազգականն։ Այս միջոցին յունական բանակը կեցած էր Վերոնա քաղաքի մօտ, որ այն ժամանակ կը գտնուէր Գոթաց ձեռքը։ Քաղաքի պաշտպաններէն մին գաղտնի խոստացաւ քաղաքը մատնել թշնամեաց, եւ այս նպատակաւ լուր զրկեց Յունաց բանակին, որպէս զի գիշերով դիմեն քաղաքի վրայ։ Սակայն Յունաց զօրավարները չհամարձակեցան բոլոր զօրքը միանգամայն զրկել, վախճալով որ գուցէ դաւադրութիւն լինի իրենց դէմ։ Ուստի խորհեցան գունդ մը զրկել որ եթէ դաւն յայտնուի իրենք ամենքն օգնութեան հասնին այն ժամանակ։ Այնուամենայնիւ

յունական զօրավարներէն եւ ոչ մին կը համարձակէր ձեռնամուխ լինել սոյն վտանգաւոր գործին։ Միայն Հայոց գնդի Արտաւազ արիւստիւր զօրավարը Հայոց զօրքերէն ընտրեց հարիւր կօրովի անձինք եւ նոցա հետ միասին գիշերայն դիմեց քաղաքն։ Եւ երբոր պաշտպանը բացաւ սարսափ դուռն, Արտաւազ իւրայիններով ներս մտաւ, սպաննեց միւս պաշտպաններն եւ յունաց իմաց տուաւ օգնութեան հասնելուն։ Իսկ Գոթացիք յանկարծակիի դալով դուրս փախան քաղաքէն։ Միւս կողմէ Յունաց զօրավարները տեսնելով ակներեւ յաջողութիւնը փոխանակ շտապելու օգնութեան՝ դանդաղեցան եւ սկսան միմեանց հետ միմարանիլ քաղաքի աւարի մասն։ Գոթացիք ապա տեղեկանալով թէ Արտաւազ հարիւր հայերով միայն կը գտնուի քաղաքի մէջ, վերադարձան քաղաքն եւ սկսան յարձակիլ Արտաւազի վրայ։ Արտաւազ անձնաբաժնով իւր մարդոցով դէպ ի պարսպազուռն յառաջացաւ, սակայն դուռները փակ էին։ Այն ժամանակ արիւստիւր հայ զօրագունքն ելաւ սարսափ աշտարակի վերայ եւ այնտեղէն իրենք դիմեցին սկսան վայր ձգել։ Այս պատճառաւ ոմանք մեռան եւ ոմանք ողջ մնալով վազեցին յունական բանակն։ Ողջ ազատեցաւ եւ Արտաւազ ու սատիկ մեղադրեց յոյն զօրավարներն որ այնպէս վատարարութեամբ լքան զինքն եւ իւր ընկերները։ Պրոկոպիոս կ'ըսէ թէ Գոթաց Տոմիղաս թաղաւորը յաստիկ կ'ուրախանայ եւ իւր բանակի հետ կը դիմէ Յունաց վրայ։ Իսկ Յունաց զօրավարները բոլորովին վախի մէջ մնացած չէին համարձակել նոցա դէմ ելնել։ Քաջն Արտաւազ տեսնելով Յունաց այս վեհերոս կացութիւնը քաւ։ Երկու վտառիւրտ կը մնար եւ ընդունայն կատակներով կը վարանի։ Երբ Գոթացիք կիսով չափ անցնին գետն, յարձակիւն նոցա վրայ եւ ջարդ ենք զնոսա։ Վտա՛հ եմ՝ մեր յաջողութեան, որովհետեւ մօտէն կը ճանաչեմ նոցա զօրութեան չափը։ Սակայն յոյները ծուլացան եւ Գոթացիք անցնելով գետն եկան բանակ դրին Յունաց հանդէպ։ Այնտեղ, կը յարէ Պրոկոպիոս, ձիւ վրայ նստած, դէպ ի յունական բանակին յառաջացաւ Վիլար անուն Գոթացի մը, որ բարձրահասակ, ծանրամարմին, ահագնատեսիլ, ուժեղաստու եւ պատուած երկաթեայ պահպանակով, եւ կանգ առնելով երկու բանակաց միջեւ, դուրս ահեղաստու։ Եւ անցէք դէմս խոյեան մ'որ կարող լինի կռուիլ հետս։ Յոյները սատանեցան այս ամենի մարդէն եւ ոչ ոք համարձակեցաւ ընդունիլ նորա առաջարկն։ Այն ժամանակ քաջարի Արտաւազ հայկազն, անվեհեր սրտով յառաջացաւ դէպ ի Վիլար եւ արիւրար կանգ առաւ նորա առաջ։ Եւ այնտեղ պէտք էր տեսնել այդ երկու անպարտելի քաջերն, որ նման երկու ամենատիւններու մանչելով իրարու վրայ կը յարձակէին... Արտաւազ մեծ ճարտիկութեամբ իւր նիզակը խրեց Վիլարի կողմ եւ երկիր գլորեց զնա։ Իմանալու համար թէ խորսպէս վիրաւորուած է Վիլար, մօտեցաւ նմա եւ իւր նիզակն աւելի խրեց նորա մարմնի մէջ։ Սակայն թեքուած ժամանակ Վիլարի նիզակի սլաքը պատուարար մտաւ Արտաւազի կողմ։ Արտաւազ թէեւ նոյն վայրկեան կարեւորութիւն չի տուաւ այդ վտանգին, բայց վերջն այն աստիճան վտանգաւոր էր որ Արտաւազ մեռաւ երեք օրէն յետոյ։ Կայսրը նորա տեղ Հայոց զինքի զօրավար կարգեց Գրգի անուն հայ մը։

Արտաւազայ մահէն յետոյ յոյներն սկսան յաղթուիլ գոթացիներէն եւ բիւզանդական կայսրութեան ազդեցութիւնը տըկարանալ Իտալիոյ մէջ։ Այս ազդեցութիւնը կացութեան առաջն տեսնուի զիտուով կայսրն ընդհանուր սպարապետ կարգեց Ներսէս հայկազն։ Ներսէս ելնելով Կ. Պոլսէն հասաւ Թրակիա եւ առ ժամանակ մնաց ի Փիլիպիս, ապա արշաւեց Իտալիա։ Նորա հետ կային բազմաթիւ զօրքեր հայազգի, օտար ազգերէ եւ բազմաթիւ թագաւորութիւններէ։ Թէոփանէս, Անաստաս, Կեդրիոս, Պրոկոպիոս եւ այլոց մատենագիրներ կ'ըսեն թէ երբ Գոթաց Տոմիղաս թագաւորն իմացաւ Ներսէսի գալուտեան լուրը, ժողովեց իւր զօրքերն եւ եկաւ բանակ դրաւ Ապենինիոն լեռան մօտ։ Այնտեղ գնաց եւ Ներսէս ու պատգամաւոր զրկեց Տոմիղասի ըսելով։ «Պէտք չէր որ այդչափ խրոխտայիր կայսեր դէմ եւ վրդավէր խորհէն»։ ապա կը յորդորէր դաւ հաշտուիլ։ Սակայն Տոմիղաս մերժեց։ Այն ժամանակ Ներսէս իւր զօրքը կարգի դրաւ եւ պատերազմի սկսեցէն յառաջ, դարձեալ քաջարի գոթացի մը դուրս ելնելով բանակէն մենամարտի հրաւիրեց Յունաց զօրավարներէն ամենաքաջն ու անվեհերն։ Այս անգամ եւս զիւցազն հանդիսացաւ հայ մը, Ընձուղ անուն, որ Ներսէսի թիկնապետն էր։ Ընձուղ վերստին ուղղուելով ձիւ վրայ խոյն իւր նիզակը կը խրէ նորա ձիւ կողմ։ Եւ նիզակի վրայ շամիրելով զնա վերջնէն ձիւ վրայէն կը հանէ օդին մէջ։ ապա գետին կը նետէ։ Յունաց բանակը տեսնելով այս աննման քաջութիւնը միաբարբառ կ'սկսի ազաղակել ցնծագին գոչիւներով։ Հայ գիւցազնի սոյն քաջութենէն յետոյ պատերազմ տեղի կ'ունենայ Յունաց եւ Գոթաց միջեւ։ Ներսէս իսկ ազգապետական հանձարով որպէս միայն անգամ եւս կը տանի յաղթանակը։ Գոթացիք սոսկալի կոտորած կ'ունենան եւ նոցա Տոմիղաս թագաւորը կ'պաշտնակ պատերազմի մէջ։ Ներսէս նոյն ժամայն աւետաւոր կը զրկէ Յուստինիանոս կայսեր։ Տոմիղասի պատմութեան եւս միասին։ Գոթացիք Տոմիղասի մահէն յետոյ թագաւոր ընտրեցին Տէյաս անուն անձ մը, ապա իսկոյն զօրք ժողովեցին վերստին, իրենց օգնութեան կոչելով եւ գերմանացիներն։ Ներսէս զայս իմանալով իսկոյն դիմեց Հռոմ վրայ, զոր գրաւած էին Գոթացիք Տոմիղասի օրով։ ճանապարհին տիրեց շատ քաջաբաց, Գոթացիք եւս իմանալով Ներսէսի արշաւանքն այն կողմ դիմեցին քաղաքը պաշտպանելու։ Սակայն Ներսէս յաղթեց նոցա եւ մարտնչելով քաղաքի հետ վերջապէս գրաւեց զայն 552/ին եւ նորա բանակիւնն ալ զրկեց կայսեր։

Ներսէս հայկազն առնէ յետոյ զՀռոմ ըստ վկայութեան Աղաթիոսի, նուաճեց եւ ուրիշ շատ կողմեր եւ զօրացաւ համայն Իտալիոյ մէջ։ Անդադար պատերազմ մղեց թագաւորն եւ մեծ ջարդ տուաւ Գոթաց

մինչեւ որ սոքա եկան Ներսէսէ հաշտու-
թիւն խնդրելու: Այնուամենայնիւ երկար
ժամանակ հաւատարիմ չմտացին իրենց
խոստման: այլ դաշն կապելով Գերմանաց-
ւոց հետ, ժողովեցին նոցանէ 72000 մար-
դիկ եւ վերստին յարձակեցան Ներսէսի
վրայ: Այս պատճառաւ Ներսէս վերստին
արշաւեց նոցա երկիրն ու գրաւեց բազ-
մաթիւ քաղաքներ: ապա գնաց Լուկա քա-
ղաքի վրայ, որի բնակիչներն առաջին դար-
կապած էին Ներսէսի հետ եւ պատանդ
առած Ներսէսին: Ներսէս տեսնելով որ
Լուկացիք կը դրժեն իրենց խոստումը,
սաստիկ զայրացաւ: իւր մարդիկ խորհուրդ
տուին նմա սպանել քաղաքացւոց պատանդ-
ները: սակայն Ներսէս, ըստ տառթեան
Արաթի, «Չէր ուզեր որ սրտամտ թիւնը
տիրէ քիւր անձին: բնականութեան հակա-
ռակ գտաւ քաղաքացւոց մեղաւորութեան
պատճառաւ անմեղներն սպանել»: Միայն
թէ հետեւեալ հնարքը խորհեցաւ: լաթե-
րով եւ տախտակով պատեց պատանդներու
վրայ, ապա տարաւ զնոսա քաղաքի հան-
գէտ եւ դահլիճներու հրաման ըրաւ սու-
րով զարնել նոցա տախտակապատ վրին: և
պատանդներն այդ միջոցին նախապատուէր
հրամանի համեմատ գետին ինկան իրր մեռ-
եալ: Քաղաքացիք երբ տեսան այս բանն
սկսան լալ ու ողբալ: եւ որովհետեւ քաղա-
քի մեծամեծներու որդիքն էին այս պա-
տանդներ, իսկայն լաւ տարածուեցաւ քա-
ղաքի մէջ եւ նոցա ծնողքն ու ազգականք
գալով պարսպի մօտ դառնապէս կուլային
եւ կ'անիծէին զՆերսէս: Ներսէս տեսնելով
այս տխուր տեսարան չդիմացաւ, նախ
պարտաւեց քաղաքացւոց ուխտագրութիւն
ներն եւ յայտնեց թէ իւր ըրածը խաղ մ'էր
էլ: Ապա հրաման ըրաւ պատանդներուն
եղիլ, արձակեց նոցա կապանքներն և թող
առաւ որ քաղաք երթան: (Շարանակէլ)
Պ. Տ.

Է Փ Ե Ն Տ Ի Ն (5)
(ՆՈՐԱՎԵՊ)

Միթէ տաժանելի գառապարտութիւն
մը չէ՞, կ'ըսէր իւր մօր շատ անգամ Սաթի-
նիկ, չկարենալ ծծել իրագունջ գետիւռն
քաղցրաբոյր եւ հողմիկն զովարեր: ծիծա-
ղելի չէ՞ վախճալ՝ եկեղեցւոյ բուրմունքն՝
որ կը ծխայ եւ գրացւոյն սիկարէն՝ որ կը
մխայ: արգահատելի չեն այնպիսիք որք կը
սոսկան արմուշն չողէն ու լուսնեկին ցօ-
ղեն, որպէս երկնային արհաւիրաց պա-
տուհաներէ:
Նիթէ հապուաղէպ առիթն պատահէր,
Սաթինիկ կը մտնէր ամէն ընկերութեանց
ու երեկոյթներու մէջ: այնչափ աներկիւզ
որչափ շնորհալի, եւ կ'ենէր դուրս այնչափ
անեղծ որչափ գեղանի: չէր այն կարգ մը
նոյնասեռ մահկանացուներէ որք կը մանեն
ցայղահանդիսի կամ պարահանդիսի մը
դռնէն ներս երիտասարդ եւ դուրս կ'ե-
նեն ծերացած:
Մէկ քանի ժամերու մէջ ծերանալն ան-
հաւատալի է անտարակոյս, այլ տխուր ի-
րողութիւն մ'է զոր ոչ ոք կարող է ուրա-
նալ առանց բացարձակապէս մեղանշելու
ճշմարտութեան դէմ:
Կաքը կազմ ու պատրաստ կ'սպանէր
տանը դրան առջեւ: Միհրանիկ եւ Սաթի-

նիկ նետուեցան կառքին դռնակէն ներս և
կառավարը մտակեց ձիերն ու ճամբայ ե-
լաւ:
— Չես գիտեր ինչ տխուր գիշեր մ'ան-
ցուցի, ըստ Սաթինիկի:
— Պարզապէս անխելքութենէդ, պա-
տասխանեց Միհրանիկ: Կ'ուզեմ գիտնալ
թէ ո՞ր ստախոսն ու զրպարտիչը պատմած
է քեզ այդ չինծու եւ բոլորովին սուտ ու
սխալ պատմութիւններն:
— Մէկը . . .
— Ընէ՛, կ'աղաչեմ, ո՞վ է:
— Մէկն ըսի, այնչափն հերքէ է, բա-
ւական է որ ես այժմ կատարելապէս հա-
մոզուած եմ թէ սրտիկ իշխանուհին ես
եմ միայն եւ չկայ մէկն որ ինձմէ աւելի
իրաւունք մ'ունենայ քու վրադ: չես գի-
տեր եւ չես կարող երեւակայել, սիրելիս,
թէ ինչ դառն եւ սոսկալի ազդեցութիւն
մ'ըրաւ վրաս այդ յերկրեալ պատմու-
թիւնը: Կարծես երկիրը նոյն պահուն շան-
թահարեցին զիս, ոչինչ կարողացայ ըսել,
ո՛չ մի բառ քու եւ անձիս պաշտպանու-
թեան համար: մտի՛կ ըրի միայն տխուր,
որդեկորոյս մօր մը նման տխուր: Լացի,
շատ մը լացի: Բիւրաւոր արտասուեց կա-
թիլներ թափեցան աչերէս, որոց իւրաքան-
չ'ւրն եթէ մէն մի խօսք լինէին, դարձեալ
չպիտի կարենային նկարագրել յուսահատ
սրտիս տխրութիւնն ու անձկութիւնը: Գը-
րեթէ չընացայ ամբողջ գիշերը: զլուխս
թաղած էի վերմակիս և շատ անգամ քար-
ձիս տակ սրպէս գի հառաչանքս ու հեծկը-
րանքս ձեր ականջին չհասնին ու ձեր հան-
դիստը չվրդովէն: Ի դուր կը ջանայի մի-
թարեւ, խաբել ինքզինքս: անկարելի էր
այդ: երբ կը մտածէի թէ դու մի ուրիշի
էիր եւ իմն չպիտի կարենայիր ըլլալ, թէ
զոգութիւն, յափշտակութիւն մ'էր ըրածս
և այդ անբաւելի ոճիր, և մանաւանդ երբ կը
խորհէի թէ քեզ հետ եւ քու պատճա-
ռաւդ . . . ա՛հ, Աստուած իմ . . . կը կոր-
սընցէի նաեւ բան մը . . . թանկագին,
անդին բան մը՝ զոր վերստանալը չէ կա-
րելի . . . ա՛հ, կը կորսնցնէի ինքզինքս ալ:
հաղար անգամ աւելի կ'ընարէի մեռնիլ,
այդ վայրկեանին իսկ մեռնիլ, քան կրել ան-
ընձեկի մուր մը ճակտիս վրայ զոր գերեզ-
մանի սև հողմիկն իսկ չպիտի կարենայի սր-
բել: Ա՛հ, ո՛րչափ միամիտ եւ դիւրախաբ-
եմ: շատ հաւանական է որ այդ չար, ան-
պիտան ընկերուհիս, զոր չպիտի սիրեմ ան-
ուանել, առ նախանձու եւ միամտութենէս
օգտուելով խնդրը բոլորովին խեղաթիւ-
րած է եւ յերկրած այդ պիտի նոզկալի ու
զարչելի պատմութիւն մը որ այդ չափ վիշտ
ու ցաւ պատճառեց ինձ: Ինչ որ է, թող
այս լաւ դաս մ'ըլլայ ինձ համար որպէս գի
ամէն ինձ հանդիպողները բարեկամս ու
բարեկամուհիս կարծելով չհաւատամ իրենց
խօսքերուն եւ այսպէս ընդ վայր շտան-
ջուիմ:
Կառքն անգաղար կ'ընթանար սրարշաւ
եւ Սաթինիկ կարի յուզեալ իւր ձայնը լսե-
լի ընելու համար, հարկադրուած էր խօսիլ
բարձրագոյն, գլխու ու ձեռքի շարժում-
ներով: Միհրանիկ անտարբեր եւ անշարժ
մտիկ կ'ընէր այդ յուզիչ նկարագրութեան
եւ մերթ ընդ մերթ կեզծ ու խարդախ
ժպտով մը կը պատէր իւր միապաղաղ
գէշքն:
— Սխալիս զուարթ ու հոգեշարժ վայ-
րերու մէջ այդ սրտնեղիչ ու տխուր նկա-
րագրութիւններն անճաշ չես գտներ: Սա-
թինիկ, ըսաւ Միհրանիկ չինծու փափկու-
թեամբ մը:

— Ա՛հ, ներէ՛, հոգիս, պատասխանեց
Սաթինիկ քաղցրութեամբ: շատ իրաւունք
ունիս, մանաւանդ՝ երբ այդ տխուր միջա-
դէպն անցելոյն կը պատկանի բոլորովին եւ
յիշատակութիւնն իսկ անպատշաճ է: այլ
խնդրեմ ներէ՛ ու մի՛ վշտանար: Լաւ գի-
տես թէ վառուած սիրտ մը մարեւէ ետքն
ալ քիչ մ'առեն կը մխայ:
Արժանի էր գէթ անգամ մը տես-
նել Սաթինիկն այդ յուզեալ վիճակի
մէջ: իւր վառ աչերով ու վառուած այտե-
րով, կարող էր հրահարել ամենէն մարած,
ամենէն սառած սրտերն ալ: փոխեց իսկոյն
խօսակցութիւնը գէթ փոքրիկ հաճոյք մ'ը-
րած ըլլալու համար իւր սիրելոյն, զոր
յանիրաւի կշտամբած ու վշտացուցած ըլ-
լալ կը կարծէր: խօսեցաւ շատ մը տարբեր
նրձերու վրայ, բնութեան եւ իւր հրա-
շալեաց վրայ, մայիսի ու իւր ծաղկանց
վրայ, Քեաղըտխանէի ու իւր չընաղ հո-
վանեաց ու դաւարեաց վրայ, երբ կառքը
ցնցուեցաւ բուռն կերպիւ ու կեցաւ:
Յկանք, ո՛րչափ ալ շուտ, ըսաւ Սաթի-
նիկ եւ կառքէն դուստըցեց թեթեւոտ:
Միհրանիկ հետեւեցաւ իրեն ու անմիջա-
պէս թեւն առաւ: Կարծես կ'ուզէր հասկը-
ցնել թէ յերկնից այսր իշխելի մոլորեալ
այդ չընաղ հրեշտակի տէրն ինքն էր միայն
եւ զոր՝ իւր ժանտ ու ժանդոտ աչերով
իսկ՝ կրցած էր գտնել ու ձեռք ձգել շնոր-
հիւ իւր փայլուն ոսկիներու եւ ակնխափի
աղամաններու լուսոյն:
Սյգպէս թեւ ի թեւ, խօսելով ու խըն-
դալով զուարճացան օրն ողջոյն եւ երեկո-
յին, դո՛հ ու զուարթ, արեւը մարը մըտ-
նեւէ գրեթէ կէս ժամ յետոյ Սաթինիկ
կրցաւ համբուրել իւր մօր ձեռքն:
Հանուեւէ առաջ, անհամբերութեամբ,
մանրամասնօրէն պատմեց իւր մօր օրուան
կեանքն ու պատմութիւնն յորում նորածե-
ւութիւնն առիւծի բաժինն ունէր:
Փոթորկալից գիշերուան՝ յաջորդած էր
խաղաղ ու անդորր գիշեր մը: օրուան եր-
կար շրջագայութիւնն եւ նախորդ գիշեր-
ուան քնատութիւնը վատտակարեկ բրած
էին զՍաթինիկ: իւր աչաց կոպեր՝ արդէն
ծանրաբեռնեալ երկար արտեւանուներու
բեռան տակ, չէին կարող այլ եւս տոկալ
քաղցր քնոյ փափուկ թեւերու ծանրու-
թեան: բաժնուեցաւ ընկերութենէն ժա-
մանակէն քիչ մ'ալ կանուխ: եւ գնաց վա-
յելիլ այն կատարեալ երջանկութիւն զոր
երբեմն երկիրը կը շնորհէ մարդկանց ոսկե-
զօծ անրջոց մէջ միայն . . .

Ե.
Ամրան տաք գիշեր մ'էր, տօթակէզ օր-
ուան մը յաջորդող հեղձամղձուկ գիշեր մը:
աստ անդ հազիւ կը տեսնուէին ցանցա-
լոյսեր որք կը լուսաւորէին մեծատանց չընդ
յարկերն եւ ուր երկսեռ ճարտար արհես-
տագէտներ զբաղած էին թղթով ոսկի շի-
նելու:
Երկնից չընաղ թագուհին՝ անթիւ չող-
չողուն աստղերով պսակուած ու զարդար-
ուած, հեղասահ կ'անցնէր երկնից կամարէն
ցողելով առատօրէն իւր արծաթի լոյսն ա-
մէն կողմ: Բաց պատուհաններու առջեւ կը
նշմարուէին շարժուն սեւ կէտեր, մարդ-
կային գլուխներ, որք դուրս կախուած կը
ջանային զովացնել իրենց տօթակէզ գլուխն
ու թոքեր: Լուսնիւնը տիրած էր ամէն
կողմ եւ մի քանի դօրտերու կոկոռկներէ

եւ գիշերային թռչնոց գեղգեղանքներէ զատ ոչինչ չէր լսուէր ամբողջ գիշերն մէջ։ Ժամը երեքն անցած էր երբ սոսկալի գոռում գոչում մը մէկ ակնթարթի մէջ վերգոյնէ գիշերուան խաղաղիկ լուսթիւնն եւ թաղեցւոց հանգիստն։ Ի՞նչ կարարեցօք, հրդեհ, գո՞ղջ կոխէ թէ պատահար։ Կահ մը անստոյգ մի երկիւղ պաշարեց ամէն սրտեր եւ դռնէն դուրս նետուողներու ու պատուհաններէ դուրս կախուողներու թիւը երթալով բազմացաւ։ Կահելի ծայն մը՝ անլուր եւ նողկալի հայհոյանքներով կը թնդացնէր օդն եւ գիշերուան լուսթեան մէջ այդ սոսկալի հայհոյանքներու տրամադանքն ի հեռուստ կը լսուէր որոշակի։ Սակաւիկ մի ուշադրութեամբ կարելի էր լսել այն բիւրաւոր անէծքը, լուսանք ու հայհոյանք որք անհաւատալի արագութեամբ եւ ուշադրաւ աստիճանաւորութեամբ մը կը թափէին այդ բերնէն։ Բիշ շատ այդ լեզուէն հասկցող մէկն, առանց վարանման եւ նախանձու պիտի խոստովանէր, թէ կ'արժէր մասնագիտի մը առաջին մրցանակը տալ իրեն։ Պատասխանող ծայն մը չէր լսուէր ամենեւին, կարծես իւր մօտ, ինչպէս նաեւ հեռուն գտնուողներն ակնածանօք եւ երկիւղածութեամբ կ'ունկնդրէին այդ թռչնալից ու քստմնելի խօսքերն, ինչպէս Ամերիկացիք՝ Ուորտ Պիչըրի քարոզները։

Բիշ մը յետոյ, ըստ առաջնոյն կը տիրէր գիշերուան լուսթիւնն ամէն ուրեք և թեթեւ շնկոց մը կը լսուէր միայն։ Անոնք որք առ առ կամ առ հետաքրքրութեան փափագած էին մօտէն տեղեկանալ խնդրոյն, շտապաւ կը վերադառնային անհամբեր իրենց սպասողներու հետաքրքրութիւնը գոհացնելու համար։

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ էֆէնտիս, հարցուց ծայն մը պատուհանէ մը, որ բաւական տարիքոտ կ'ընդ մ'ըլլալ կը թուէր։

— Ոչինչ, խայտառակութիւն, պատասխանեց անցորդն եւ կ'ուզէր իւր ծամբան շարունակել, երբ երկրորդ հարցում մը կասեցուց զինքը։

— Ինչդեմ, էֆէնտիս, արդեօք չէ՞ք կրնար երկու խօսքով հասկցնել թէ ի՞նչ պատահած է։

— Քողոցէն՝ պատուհանը գտնուողի մը հետ խօսուելիք բան չէ, մայրիկ, ըսաւ եւ հազիւ կրցաւ ճողորկել երրորդ հարցումէ մը որ պատրաստուած էր արդէն։

Այդ անցորդի այսօրինակ պատասխանը կրնաք երեւակայել թէ որչափ բորբոքեց կանացի հետաքրքրութեան կայծն։ Եթէ խնդրոյն չտեղեկանային չափաւ կարենային հանգիստ գիշեր մ'անցնել։ Պէտք չէ յուսահատիլ, հնարագէտ են կանայք։

Գիշերուան ժամը չորսն էր եւ գիշերապահի գաւազանի չորս հարուածները կը լսուէին հեռուէն։ Պողոս աղբարն ըլլալու է, ըսաւ կին մը, անկէ լիովին կրնանք տեղեկանալ եւ դռնէ դուրս թափուելու կարգը գեղեցիկ սեւինն էր այս անգամ։

Արդարեւ Պողոս աղբարն էր՝ գիշերապահը, խեղճը բոլորովին չուարեցաւ տեսնելով ինքզինքը, գիշեր տեսն, չըջապատուած գողերէ, սրտի գողերէ այս անգամ, եւ չէր գիտեր ո՞ր հարցման և որո՞ւ հարցման պատասխանել։

Ճանմ խանրմներ, մէկ կտոր ծէներնիդ կարէք կիտցածս, տեսածս գլխուց խորոտ մը պատմեմ ձեզի, ըսաւ Պողոս աղբար փոքրիկ անհամբերութեամբ մը եւ սկսաւ իւր ճարտասանական բոլոր ճիգը թափել

այդ միջադէպը մանրամասնօրէն եւ ճշգրտութեամբ պատմելու իւր սիրուն ունկնդրաց, առանց սակայն կարենալու իւր լեզուի խորթ չեղտերը փափկացնել։

Խանրմներ, ըսաւ, աշխարհիս կատարած մօտացիր ի, էսա ցատի փողանի մէջ քանի մի ամիս ի, խեղճ, անտէր, ակլող կնիկ մը էկիրի, էնչափ խեղճ, էնչափ խեղճ, առուր խացի կարօտ, սիրտս չէր պիւրէր որ էրթի իմ պէջիւթեան փարէն ուղի ինոր մօտէն։

Ամէնքս ալ մախկանացու ինք, մեռնելու ինք, առաջի անգիղ դատաստանին պատասխան տալու պարտական։ սուտ սատանային է. ես չեմ կանայ խապէ խոգիս կորուսէ։ Ըմէն ժամանակ երբ էտա կնկան դրան առջիվէն կ'անցնի ձեռքիս փէտ զարնելով, չը մօտնի հա վեր կ'իրիչկի եւ կը ցաւի խեղճ, ողորմելի կնկան վրայ։ ճորով մի քանի գիշեր անգամ պզտի լէօս մը կը տեսնի խորտան մէջ։ Ժէն ծէնոց չկէր, քանի մի դիր ծծկեր տղի մը ծէն առի, էնչափ, ուրուշ տղէջի տղոց պիւր կը կէր, մաս կիտի։

Աղբոք որ շատ ժամանակ ինոր կը տեսնի, կէս գիշերէն էտքն էլ պատուխնի առջեւ, ձեռքը ճայտին, համա մինակ, խանրմներ, նարեկացին կիտի մինակ։ Մէկ էլ էսա կիշերն էլ ուրուշ օրուան պէս տներ աչքեւ կ'երթի կը պոտի, լսայ որ խեղճ կնկան տան տիխէն, աստեմ խարիր տիւր ասէք խաղոր իշուց կուկէր իմ ակնջիւս, համա վագի ի՞նչ տեսնամ աղէկ ի, խանրմներ, ի լին մարդ ցուեր ին դրան առջեւ, միթար, կեահեան, քանի մը խաա զաւթիա մէկ էլ 30-35 տարեկան կտրիճ երկտաարդ, չիմ կիտէ իրիկն էր թէ մով էր, չիլ էնանկ կուգէր որ իրիկն էր. կրակ կուտէր ու բոց կը թողնէր. վո՞վ են այս օտարականներ, կը խարցուցէր էտա կնկան տան մէջ պախկուած երկու երկտաարդներաց համար։ Եւ էտա անզգամ կնիկ ծէն չի տար. չը խանկացայ մարեր էր, թէ վախէն չէր գրուցէ. վէճասըլի, պոռաց, կանչեց, յիշուց տուաւ քիչ էր մնացեր զարնէ մեռուցէր. չորս կողմի գտնուողներ խաղար ճարով խաաան ազատեցին. աղէկ մը տըրկիցներաց, միթարին, կեահեային զաւթիաներաց առջեւ խաղը խայտառակ ըրաց, մէյ քանի դիր երեսին թքեց միեց իթող դնաց։

Խանրմներաց ասիմ, էսա, աշխարհիս մէջ էլ բանի մի հաւատարմութիւն չը մնաց. խոր սրտի ճանչցած գէշ կը դառնայ, աղէկ ճանչցածդ լիտի։

Զիւմ մկա էտինա պան էտա կնկան խա. մար գրքի կողքի տեսնի գրուած կը ճղի, կը պատռտի, կը թալի մէյ կողմ, հա, վալլա։

— Էյ, այդ երկու մարդիկ ո՞վ են եղեր, հարցուցին կանայք միարեբան։

— Օտար... չար մտքի տէր մարդիկներ...։

— Դու աչքովդ տեսար, այդ մարդիքն, յաւելցուցին։

— Ի՞նչն չէ, պատասխանեց Պողոս աղբար. ծիգնից թիւ մը զատ կայնիրին, չը տեղնամ կ'ելնի՞ մի։

— Անոնք բնաւ բան մը չխօսեցան, պատասխան չտուին։

— Ի՞նչ կ'ասէք, Աստուածնիդ սիրէք, էտա կնկան էրիկ՝ երեսին թքելով խայտառակելով իրեն ձեռքով տնից դիւրս խաներ ի, էլ ինչն կ'ելնի որ բերաններ բռնի պատասխան տան։

Զինքը չըջապատող կանայք կը պատրաստուէին տակաւին խել մ'ուրիշ հարցումներ ընել իրեն, երբ Պողոս աղբար լուսնի լոյսով ժամացոյցը նայելով տեսաւ որ հընգին կը մօտենար։

Մասայ եմ, գիշեր բարի, խրաման տըւէք խանրմներ, երթամ կործիս ետ չմնամ, վերջէն խացեց կ'ելնեմ, իմ խացից մանա տու կ'ելնէք, ըսաւ եւ հազիւ հազ կրցաւ օձիքն ազատել այդ հետաքրքիր եւ սըրտամոռութեամբ վառուած տարասեւ ամբոխին ձեռքէն։

— Բայց մենք կ'ըսէինք որ բան մ'ըլլալու է, անտիթը, լիտին, կ'ըսէին այլ եւս իրենց մէջ կանայք եւ խղճի կատարեալ հանգարտութեամբ թշուառագոյն տեսնել զայն կը փափագէին միահաղոյն։

(Շարունակել)

ԹԱԼԻԷ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Մ

Շ Ա Յ Ա Թ Ա Կ Ա Ս Ն Լ Ր Ո Յ

Յուլիս 1855 Յուլիս 24

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Շարժում երկու մեծ կորուստներու նեցան Ռուսիա և Իտալիա, առաջինն յանձին Պ. Կալըքֆի, Մոսկովի Վեպրոսի համալսարանի թերթի հանրածանօթ խմբագրապետին, որ մեռաւ յուլիս 21ին Մոսկուա, եւ երկրորդն յանձին նախարարապետ Պ. Տէրէզիսի, որ մեռաւ յուլիս 18ին ի Սպրաուէլլա։

— Եւրոպական վերջին սուրհակապետն ուսած լրագրաց մէջ կը գտնենք Հեպտա հեռագիր մը, ծանուցանող թէ «Յունաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւն աւելի եւս մտերմացան շնորհիւ յաջող լուծման կրէտական խնդրոյն։ Հանեայէ հեռագրեր կը ծանուցանեն փախուսմի կրէտական Ժողովոյն, որ ընդունեց Օգոստոս Վեպրոսի կողմէ շնորհեալ պայմաններով։ Այս խաղաղ արդեան նպատակով է հեղինակաւորութեան ուղիւ ընթացքը։ Տէրութեանց ուսանց ի գործ դրած հակառակ ազդեցութեան չնայելով, Յունաստանի միջնորդութիւնն օգտակար հետեւանք ունեցաւ։ Ուստի, Բ. Դուռը շատ գոհ է Յունաստանի ընթացքէն։ Արեւելի օսմ. պատուիրակին հեռագրաւ շնորհակալութիւն յայտնեց Հանեայի հեղինակաւորութեան, որ յայտնեց երկրորդ կարգի Մէլիտի պատուանշանն։ Նաեւ, արեւելի քարտուղար մը Կ. Պոլսոյ հեղինակաւորութեան քով երթալով, գոհունակութիւն յայտնեց հեղինակաւորութեան աջակցութեան համար, առ ի բարձունք կրեաւական դժուարութեան թիւն յայտնեց հեղինակաւորութեան յաջողութիւնը։

— Պաղէսպէրկի Վեպրոսի իշխանն այժմ կը բնակի յՕպէրհոֆ, թուրքական սնտառին մէջ, առաջիկայ ամսուն Անգլիոյ պիտի երթայ եղեր, հիւր լինելու Վեպրոսի թաղուհոյն։

— Ուէյլի իշխանն եւ իշխանուհի (գոռուտ Դանիոյ թագաւորին) այս օրեր Բոնիէնակ կ'երթան։ Յունաստանի թագաւորն (որդի Դանիոյ թագաւորին) եւ թագուհին արդէն ի Բոնիէնակ են, եւ Զարուհին (գոռուտ Դանիոյ թագաւորին) մէկ քանի օրէն կը հասնին Դանիոյ։

մայրաքաղաքը : Քանի մը տարիներէ հետո՝ ֆոփիէնհալ մեծ կարեւորութիւն առած է, կայսերաց ու թագաւորաց բնակարան դառնալով : Գանձիոյ թագաւորն ալ կրնայ պարծիլ թէ, իւր թագաւորութեան փոքրութեան հակառակ, ինք բացառիկ դիրք մ'ունի իբրեւ «Հայր Վեհապետաց» :

—Պ. Ժիւլ Ֆէրրի, նախկին նախարարապետն Ֆրանսայի, յիշմանով ճառ մ'արտասանելով զինավարժութեան ընկերութեանց տարեկան ժողովոյն մէջ, Արմատականաց զէմ' խօսեցաւ եւ ինչ ինչ ակնարկութիւններ ըրաւ Պուլանժէ զօրավարին դէմ, ի մէջ այլոց «Քաֆէ-Քոնսէնի մը Սէնդ-Աւնո» կոչելով զնա : (Սէնդ-Աւնո՝ Նարո-լէն Գիւ ամենէն համբաւաւոր զօրավարն էր իբրեւ պատերազմին մէջ) : Այս «Զբօսարանի Սէնդ-Աւնո» տիտղոսն ի խոր խոցած էր Պուլանժէ զօրավարն որ մենամարտի հրապարակ Պ. Ֆէրրի : Այս պահուս Ֆրանսայի մէջ ամենէն աւելի ժողովրդականութիւն վայելող զօրավարի մը կողմէ դիւանագիտի մ'ուղղեալ մենամարտի հրաւերը բաւական զբաղեցուց բաց ի Ֆրանսական մամուլէն, նաեւ ամեն անոնք որք հետամուտ են Ֆրանսայի դործոց, և մենամարտին ելից կ'սպասուէր : Բայց վերջապէս հինգ շաբթի օրը Փարիզէն հեռագիր մը ծանոց թէ Պուլանժէ զօրավարին վկայները ետ քաշուեր են, որովհետեւ Պ. Ֆէրրիի վկայները մերժեցին իրենց զուգորդ մենամարտի պայմանները զորս Պուլանժէ զօրավարը կը պահանջէր իբր թըշնամեալ :

—Լոնտոնէն հեռագիր մը կը յայտնէ թէ Ա. Փլանկան սահմանադրաց մասին Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ գոյացեալ համաձայնութիւնը նշան մը կը համարուի ի Եւրոպայի թէ այդ երկու տէրութիւնք պիտի համաձայնին ուրիշ խնդրոց վրայ, միջեւ իսկ եւրոպական խնդրոց վրայ եւս :

Ն Ե Ր Ք Ի Ն

Պերլինի օսմ. դեսպանատան խորհրդական Վ. Օհան էֆ. Պաղտատեան մայրաքաղաքս եկած է պուլկարական խնդրոյն առթիւ ինչ ինչ զեկոյցներ ընելու Բ. Դրանս : —Վեհ. Սուլթանն հրամայած է որ ըստ պարսպետի Դրանս ապրանք տուող վաճառականաց պահանջներն որք առկա կը մնան 1296 տարիէն ի վեր, կարգադրուին անմիջապէս :

—Կայս. Միլլիէ վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսը կատարուեցաւ այս երեքշաբթի օր : Կայս. պալատան առաջին քարտուղար Սիւրէյա փաշա քաջաբերական խօսքեր ուղղեց շրջանաւարտից և Վեհ. Սուլթանի կողմէ շնորհեալ ոսկի ժաւացոյցներ յանձնեց անոնց : Շրջանաւարտը 19 երիտասարդք են որոց երեքն հայ, Սեւրովէ էֆ. Պէրպէրեան, Երուանդ էֆ. Գաբաշեան և Սաչիկ էֆ. Կեսարեան :

—Եւրոպական նախարարութիւնը չըջաբերականաւ ծանոց ամեն կողմ թէ, ինչպէս կառավարութեան, նոյնպէս և թագապետութեանց եւ հանրագումարներու պարտաւանաց չարտի տրուի տասանորդական տրոց վարձակալութիւնն : Այս տնօրինութենէ ազատ կացուցուած են միայն հանրագումարներու պարտք ունեցող զիւղորէից բնակիչք :

—Պետական խորհրդոյ երեք անդամներէ բաղկացեալ մասնախումբ մը կազմուած է որ ի մօտոյ կը մեկնի մայրաքա-

ղաքէս : Սոյն մասնախումբ պաշտօն ունի գաւառաց ուսանց վիճակը քննել, տասանորդական տրոց եւ հասութից հաւաքումը փութացնել, հանրային բարեկեցութեան վերաբերող զէպքերը քննել, սովելոց նըպաստ հաւաքել եւ վերջապէս գործադրել Վեհ. Սուլթանի բոլոր հրամաններն որք կը վերաբերին ժողովրդեան բարեկալութեան :

—Եւրոպիկ եւ Մալթայի մէջ ըլերածափած լինելով, այն կողմերէն եկող նաւուց համար քարանդինա հաստատուած է օսմ. նաւահանգիստներուն մէջ :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Կարնոյ հրաժարեալ առաջնորդ Գեր. Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան չորեքշաբթի օրը մայրաքաղաքս եկաւ ուստից Եւրոպիան պիտի ուղեւորի :

—Կրօնական Ժողովն նկատողութեան առնելով Բէճարի Յովնէփեան անուն փաստաբանին կրօնափոխութեան համար Գառա կան եւ Կրօնական դործոց նախարարութեան մատուցած աղերսագիրն, որոյ մէջ ակնարկութիւնը եղած էին Ս. Երրորդութեան խորհրդոյն զէմ, այս մասին ձեռնհաս իշխանութեան ուղադրութիւնն հրաւիրեց Թագրիւրով մը :

—Եէնի-Գաբուի մէջ, նախագահութեամբ տեղւոյն քորդիչ Գեր. Հմայեակ եպիսկոպոսի, յանձնաժողով մը կազմուած է թաղին եկեղեցւոյն նորոգութեան համար հանգանակութիւն մը կատարելու պաշտօնով եւ արդէն 90 ոսկւոյ գումար մը հաւաքած է :

—Ազգ. Կեդր. Վարչութիւնը՝ Ղալաթիոյ Թաղային Յանձնաժողովին առաջարկութեան վրայ, արտօնեց տեղւոյն Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վերանորոգութիւնը : Եկեղեցւոյն երեք մասերն իրարմէ բաժնող պատերը վար առնուելով, երեք տաճարք պիտի միացուին եւ միայն երեքական սիւներով պիտի բաժնուին իրարմէ :

—Մեծարոյ Պ. Նորայր Բիւզանդացի ԲՆՆԱՍԷՐ անուն ամսօրեայ հանդիսի մը հրատարակութեան ձեռնարկած է ի Սղոք-հոլմ, որոյ նպատակն է ազգային հին գըրականութեամբ պարագլիւ Ձերագրաց բաղդատութիւնը, գրչագրաց վրիպակը, շարագրութեանց տարբերութիւնը եւ անհարգապաշտութիւնը, եւ ընդհանրապէս ազգային մատենագրութեան գանձուց յայտնութիւնը՝ նիւթք են հետազօտութեանց յիշեալ հանդիսին :

—Ս. Պատրիարք Հայրն օրհնութեան կոնդակ մը զրեց առ Մեծ. Պաղտատեան էֆ. Յակոբեան որ Գընալը կղզւոյ եկեղեցւոյն կալուածոց շինութեան համար յօժարակամ նուիրած էր տասնութ հազար գահեկան :

—Ռուսահայ երաժշտապետ Պ. խաչատուր Մարգարեան (Կիւրա Մուրզա) չորեքշաբթի օրը մեկնեցաւ մայրաքաղաքէս ի Վենետիկ ուր շաբաթ մը Միլիթարեան Հարց վանքը մնալէ յետոյ, պիտի վերադառնայ ի Կ. Պոլիս ուր մտադիր է ազգային նուագահանդէս մը տալ ի նպաստ վերաշինութեան Ս. Փրկչեան Հիւանդանոցին :

—Լ. Հէրշլի ուղղեալ նամակ մը հետեւեալ կերպիւր կը պատմէ Ս. Մարտիոյ մէջ վերջերս տեղի ունեցած զէպք մը որուն վրայ Ս. Պատրիարք Հայրը Գառական նախարարութեան ուղադրութիւնն հրաւիրած է արդէն :

«Յունիս ամսոյ վերջերք, մանկամարդ հայ աղջիկ մը փախած էր հայրենի տուն-

նէն թուրք երիտասարդի մը հետ որում սիրահարուած էր չորս տարիէ հետէ : Բնականաբար իւր ծնողք կառավարիչ Հասան Ֆէխամպէյի դիմեցին որպէս զի պէտք եղածն ընէ և իրենց աղջիկը գտնէ : Կառավարիչը խոստացաւ լրջօրէն հետամուտ լինիլ գործին և արդարեւ խոստումը բռնեց, բայց հակառակ կերպով : Արդէն ինք քաջ տեղեակ էր գործին : Սակաւ ժամանակ առաջ երիտասարդը փախազ յայտնած էր քրտոնեայ լինելու որպէս զի կարենայ ամուսնանալ հայ աղջկան հետ, սակայն անմիջապէս խոստացան նմա թէ իրեն կ'նու-թեան պիտի տան իւր սիրոյ առարկայն եղող աղջիկը, առանց կրօնափոխութեան դիմելու պէտք թողլու : Այս նպատակաւ յաջողեցան համոզել կամ բռնադատել աղջիկը (այս մասին հակասական զրոյցներ կը շարունակեն) որ թողու հայրենի տունը, ժամանակ մը պահած էին զայն եւ գալթակցութիւն չը պատճառելու համար որոշած էին թօգաթ դրկել զնա, ուր կրնար աւելի դիւրաւ կրօնք փոխել : Այս միջոցին, բարեսիրտ թուրք կին մը հայ աղջկան եղբարքը գտնելով դաւադրութիւնը կ'իմացունէ անոնց որք քանի մը անձանց աջակցութեամբ յարմար վայրկեանին կ'սպասեն գործելու համար : Յուլիս չին զարթիչներէ չըջապատեալ կառք մը թօգաթի ճամբան կը բռնէ սրարչաւ : Կառքին մէջ հային երեք չորս թուրք կանայք և մանկամարդ : Կին մը, երեսը քօղարկեալ, որ նորածին մանուկ մը գրկած էր : Այն վայրկեանին յորում կառքը կամուրջի մը վրայէն կ'անցնէր, աղջկան եղբարք իրենց բարեկամաց հետ՝ առանց տեսնելու թէ ինչ վտանգի կը դիմէին արագընթաց կառք մը կեցուցնել ուղեւորի ձիերուն վրայ կը յարձակին, փոկերը կը կտրեն և կը յաջողին ձեռք անցունել իրենց քոյրն Յայնժամ թուրքերը կը հաւաքուին, նոյնպէս և Հայերը : շփոթութիւն մը կը ծագի, ինչպէս կը պատահի այս տեսակ սրապայտից մէջ : Միւրեքսարքը կ'ուռոյ վայրն հասնելով օտարական հետ, անոնցմէ միոյն թրածեւ սուրնը կը յափշտակէ և անոր բռնովը կ'սկսի դէմն ելած Հայերն հարուածել : Ոստիկանք անոր օրինակին կը հետեւին և անտարակոյս կ'ուռ պիտի շարունակէր եթէ աղջկան մայրն որ վրայ հասած էր՝ խնդրած չը լինէր կառավարիչէ որ դադարեցունէ զայն : Այդ կնոջ կրկնակի թախանձանաց վրայ, Ֆէխամպէյ ձի մը կը հեծնայ և կառավարական պաշտօնատունը կ'երթայ : Անդ, կոչել կուտայ հայ հասարակութեան բոլոր ազգեցիկ անդամներն և ժողով մը կը գումարէ յորում կը յանձնարարուի երկու երեւելեաց՝ աղջկան բով երթալով անոր միտքն իմանալ : Ասոնցմէ մին՝ Յակոբ էֆէնտի Սիմոնեան, կարող և համոզակեր լեզուի տէր երիտասարդ մը, յաջողեցաւ համոզել օրիորդն իւր ծնողաց քով մնալ և կրօնափոխ չլինել : Բնականաբար կառավարիչն համակերպեցաւ և աղջիկն յանձնեց իւր ընտանեաց : Երբ հայ երեւելիք կառավարական պաշտօնատունէն մեկնեցան, ամբոխն սկսաւ հետեւիլ անոնց, անիծալից խօսքեր արձակելով կառավարչին դէմ որ պատճառ եղած էր որ տասնի չափ Հայեր վիրաւորած էին : Յայնժամ ի ժողով կը գումարին եւ հեռագրեր կ'ուղղեն Սերաստիոյ կուսակալին, Մեծ-Եպարքոսին, եւ Հայոց Պատրիարքարանին, իրողութիւնը նոյնութեամբ պատմելով եւ արդարութիւն ու պաշտպանութիւն հայցելով :

«Ասոնցմէ զատ, ուրիշ երկու հեռագրեր ուղղուած են, մին Մեծ-Եպարքոսին եւ միւսը Սերաստիոյ կուսակալին, յայտնելով թէ կառավարիչը բարկանալով հայ հասարակութեան դէմ որ առաջին անգամ ինք հեռագրեր ուղղած էր, կը ջանայ ամեն կերպ տառապանաց մատնել զայն, և խնդրելով որ յատուկ քննիչ մը զրկուի, և այլն, եւ այլն : Միւս կողմէ, գերմանական զէր հիւսիստոսը տեղեկագիր մ'ուղղած է իւր զեպականատան :

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՐԹԵԱՆ ԿԵ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ ՀԵՏԵԻԵՍԻ ՀՈՏԱԻՏ ՆԻԻԹԵՐԸ . Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արգելադրողի համար . Ambrosial cream, օճառ և զառիթափ ամառային մարգարիտ համար . Crème de Fraises սուրճի կակոզիլներու համար . Poudre de Cypres զովացնելու եւ ճերմկեցնելու համար սուրճի . Stilboïdeօլ տալու համար մազերուն եւ մարմնի . Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը . Alcoolat de Cochlearia ակոալներու համար . Eau de Chypre արդու գաղտնի համար . Քաղցրահամի համար հոտաւէտ իւր թիւ . Hélotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Marie Christine. 977

ԿԱԼԶԻՒ ՄԻՋՈՏԱՍՊՈՂԱՆ ՓՈՇԻՆ

ԱՄԵՆԱՋԴՈՒ ԴԵՂ ՍԵ ՄԼՈՒԿՆԵՐՈՒ, ԼՈՒԵՐՈՒ, ՈՋԻՆԵՐՈՒ, ՃԱՆՃԵՐՈՒ, ՄԺԵԳՆԵՐՈՒ, ՄՐՃԻՆՆԵՐՈՒ, ԹՐԹՈՐՆԵՐՈՒ, ՇՈՐԵՆԻ ՈՐԳԵՐՈՒ ԵՆ ԴԵՄ՝
Քիչօն կը ծախուի 12 Փրանք . թըղթատարութեան միջոցաւ, 100 կրամն 1.95 Փր. է . Դիւլեւու է առ Է. ԿԱԼԶԻ, 71, Կուռ տ'Երպոնովի, Լիւոն .
Արեւելից համար ներկայացուցին է Դեղագործական Մթերանոցն, Ղալաթիոյ Մեծ փողոց, 55, Կ. Պոլիս .
796 10-10

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

ՎԵՆԵՏԿՈՅ ՄԻԻԹԱՐԵԱՆՑ
1. Ուղարկուիւն է Պոլսէ, Հալիպ, պատկերազարդ, Ի Հ. Յալիպոսէ վ. Իսապէրտեանց Ֆր. 2, 75
2. Կալաթիէ Ֆր. 1, 25
996 4-4

ՎԻՃԱԿԱԼԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՆ
ԲԱՌԵԼԵ ԵՐԿԱԿԱՆՔԱՅ ԲԱՅՆԵՐԱՆԵՐՈՒ 105ԵՐ ՎԵՐԱԿԱՆՔԱՆԵՐԵԱՆ ԿԱՐԵԿԱՆՔԱՆԵՐԵԱՆ

Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.	Ֆր.
1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000
4,228.161	463.576	449.398	600.000	751.057	
1,260.400	563.798	527.940	60.000	1,372.113	
1,326.735	605.876	757.268	20.000	764.397	
1,411.856	672.706	950.164	6.000	666.440	
1,479.578	672.709	1,160.751		496.936	
1,566.823	737.025	1,160.755		449.396	
1,819.224	764.396	1,228.162		519.970	
1,867.577	769.750	1,260.399		605.877	
1,924.866	814.391	1,260.399		905.652	
1,957.083	814.394	1,662.057		950.162	
1,964.632	943.673	59.367	3,000	230.514	
	983.685	496.940		308.852	
	1,133.335	247.667		394.468	
		311.926			

ԱՆՃԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ (ՊՈՒՍԱԿԱՆ ՎԵՊ)

Գրեց Փ. ՋՈՋԻՐԱՊ
Կը վաճառուի, Ի գին 6 ղը . բոլոր հայ գրավաճառաց քով . Կեդրոնատեղին է Միացեալ Ընկերութեանց Գրասենեակը, Կէօչէ-օղլու խան, Ղալաթիա .
6 40 5-5

ԺԻՒԼ ՎԵՐՆ ՔԱՆ ՋԱՋԱՐ ՓԱՐՍԱԻ ԾՈՒԼԵՐՈՒՆ ՏԱԿ

Թարգմ. Պ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Ժիւլ Վերնի այս հռչակաւոր գործն, որ Ֆրանսայի ճեմարանէն պատկուած է եւ զոր մեծ խնամով հայերէնի թարգմանած է Իւթիւնեան Կարապետ էֆէնտի, Արեւելի մէջ իբր թերթօն հրատարակուելէ յետոյ, այժմ երկու առանձին հատոր կողմած կը վաճառուի ամեն հայ գրավաճառաց քով . Իւրաքանչիւր հատորի գինն է 7 1/2 ղը :

Ջերմասէս կը յանձնարարենք մեր ընթերցողաց դործածել Հէնրի Միւռի Օլո. րակն, բուժելու համար իրենց ջղային հիւանդութիւնները, զլիսու պայտաները, քրնատուութիւնները, ջղային ցնցումներն եւն .
Փոքրաքանակ կը վաճառուի ամեն դեղատանց մէջ . Կեդրոնատեղին է Դեղագործական Մթերանոցն, 55, Ղալաթիա մեծ փողոց . 776

Վասն Արտօնատեալն
Տնօրէն-Պատասխանատու
Է. ՏԱՄԱՏԵԱՆ
ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼԵ ԵՆ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԼՏԵՄ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՇ ԴԵՐՎԵՐԱՆԵՐՈՒ ՄԼՏ. ՆՈՐՈԳԻՒՂ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղկուտայ : Կը նորոգէ անոր կեանքը, ղյժը եւ աճումը : Գլխու թեփը շուտ մը անկեղծ կ'ընէ : Իր անուշ հոտը առատ է ու հեշտակ :
"Մէկ շիշ կը բաւէ :"
Եւ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքապաշտած մազերը իրենց ընական գոյնին դարձան, եւ ճաղատ տեղերը մազով ծածկուեցան :
Կերկ չէ, եւ ամենեւին գեան մը չընէ : Ի՞նչ որ կ'ուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր ՔԵՆՆ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ .
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)
Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row).
Նոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք : Կրկնապատի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անդղիացի դեղագործներու քով .
Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայր բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց . Իսթլինո Բարուան . Անգլիական մթերանոց, Նիւքէք Գալուրըմ . Եւ Իգիտոր Լազանուլլա 455, Բերա Մեծ փողոց :



ՀԵՐՄԱՆԵԿԱՆ ԴԵՐՎԵՐԱՆԵՐՈՒ

ԿԵԿԱՆՑՈՒՆՈՒ ՄԼՏՄԱՆՑ ԳՈՅՆԵՐ, ՄԻՇՏ ԴԵՐՎԵՐԱՆԵՐՈՒ, ՄԻՇՏ ԴԵՐՄ :
Ընդամուսն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բազմաթիւ փոշիներէ : Եռալին անգամ դործածելով ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի խիղճն որ երեսը, վիզը, թեկը եւ ձեռքները պիտի առնուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիտի փայլ . հանգերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ : Սապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցուն : Ընհետ կ'ընէ մորթի սեւութը, երեսի եւ ձեռքի ցաները, տրեւյրութիւն, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւորութիւն : Եւ այս ամեն բանով անկարելի կ'ընէ մատնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է :
Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row).
Բարիզ ու Նիու Եօրք : Կրկնապատի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անդղիացի դեղագործներու քով :
Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայր բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց . Իսթլինո Բարուան . Անգլիական մթերանոց, Նիւքէք Գալուրըմ . Եւ Իգիտոր Լազանուլլա 455, Բերա Մեծ փողոց :



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱՋԵՐՈՒ :

ՄԵԼՐՈՂ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմակած կամ գունաթափ մազերը . Կը դադրեցունէ անոնց թափելը . Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ :
Կը վաճառուի երկու չափով մեծ շիշերու մէջ :
Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row).
Բարիզ ու Նիու Եօրք :
Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայր բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց . Իսթլինո Բարուան . Անգլիական մթերանոց, Նիւքէք Գալուրըմ . Եւ Իգիտոր Լազանուլլա 455, Բերա Մեծ փողոց :